Պարսկական ծոցի խամաճիկային արաբական ռեժիմների գլխավորությամբ: Հասկանալի է, որ պատերազմի արմատները կարելի է փնտրել տասնամյակների ու հարյուրամյակների խորքում՝ հիշելով, որ նույնիսկ տարածաշրջանում Օսմանյան կայսրության տիրապետության ժամանակաշրջանում Եմենի

բնակչությունը կարողացել է պահպանել իր անկախությունը, կամ այն, որ՝ չնայած Հյուսիսային ու Հարավային Եմենների միավորմանը ԽՍՀՄ փլուզումից հետո, այդպես էլ չհաջողվեց հասնել ներպետական միասնության: Տուրք տալով Թուրքիայի, Իսրայելի ու ԱՄՆ-ի «փորձագետների» կողմից շրջանառության մեջ նետված գայթակղիչ «նորաձեվությանը» կարելի է նաեվ ամեն ինչ հանգեցնել սյունիների ու շիաների միջև առկա դարավոր հակասություններին: Սակայն, օբյեկտիվ դիտարկողը կնկատի, որ իրավիճակի ներկայիս սրացումը /թեկուզեվ Եմենի բնակչության այս կամ այն խմբերի միջև առկա դարավոր տարբերությունների ու հակասությունների առումով/ տխրահռչակ «արաբական գարնան» հետևանք է, որը վերջ դրեց գրեթե բոլորի համար շահավետ մարշալ Ալի Աբդալլա Սալեհի 34-ամյա տիրապետությանը, որն իդեպ պատկանում է Հաշիմ զեյդիտական /խուսիտական/ ցեղամիավորման սանխան ցեղին, եվ որը ժամանակին դեկավարում էր Թաիզի ռազմական օկրուգը:

Իհարկե, այս երկրում դեռ մինչև «արաբական գարունը» կային բազմաթիվ հիմնախնդիրներ /սա ամենաաղքատ արաբական պետություններից է/: Սակայն, երկու Եմենների միավորումը 1990 թ.-ին, ըստ էության, համեմատաբար խաղաղ ընթացավ: 1994 թ.-ին երկրի հարավում ծագած քաղաքացիական պատերազմը շատ արագ ավարտվեց /հենց դրա համար էլ Եմենի խորհրդարանը Սալեհին շնորհեց մարշալի կոչումը/: Բայց, ինչպես հայտնի է, 2000ականների երկրորդ կեսին կրկին սրվեց իրավիճակը Եմենում: Սալեհի ռեժիմը հայտնվեց երկու ուժեղ հակառակորդների հարվածի տակ: Մի կողմից, դա «Ալ-Քաեդայի» արմատական իսլամիստներն էին ու դրանց ենթակա կազմակերպությունները, իսկ մյուս կողմից՝ հյուսիսային գավառների շիա-զեյդիտները /խուսիտները/: Վերջիններս Սալեհին մեղադրում էին երկրում սյունիթական դիկտատուրա հաստատելու /թեվ նա ինքն ուներ զեյդիտական ծագում/ եվ շիաների նկատմամբ կրոնական խտրականության մեջ, ինչպես նաեվ ԱՄՆ-ի եվ Իսրայելի հետ համա-

գործակցության մեջ: Իր հերթին Սալեհը մեղադրում էր զեյդիտներին նրանում, որ վերջիններս փորձում են վերականգնել զեյդիտական իմամների միապետությունը: Շիաների դիմադրության հենակետային ամրոցը դարձավ հյուսիսային լեռնային Սաադի տարածքը: Զեյդիտական ցեղերի ապստամբությունը սկսվեց 2004 թ.-ին, իսկ 2009-2012 թթ.-ին այն թեվակոխեց իր ակտիվ փուլը: Սալեհի ռեժիմի օգտին հանդես եկան սյունի ֆունդամենտալիստները, այդ թվում՝ «Ալ-Քաեդայի» գրոհայինները, որոնք մինչ այդ պատերազմում էին Սալեհի դեմ, սակայն որոշեցին սատարել վերջինիս՝ շիաների ապստամբության ճնշման հարցում:

Այո, այս ամենը իրականում տեղի է ունեցել եվ չարժե դա ժխտել: Սակայն հատկապես 2011-2012 թթ.-ի «արաբական գարունը» շեշտադրված վերջակետ դրեց Սալեհի տիրապետության պատմությանը: Արդյունքում, կամավոր կերպով հրաժարական տված Սալեհը պահպանեց անձեռնամխելիության քաղաքական ու իրավական երաշխիքները, սակայն Սալեհի հեռացումը Եմենի համար չնշանավորվեց խաղաղության ձեռքբերումով: Երկրի դեկին կանգնեցվեց սաուդիտների խամաճիկ՝ սյունի Աբդ Ռաբբը Մանսուր Հադիին, որն անմիջապես դարձավ Միացյալ Նահանգների «մերձավորը», եվ իրավիճակից դժգոհները հասկացան, որ ըստ էության ոչ-մի իրական փոփոխություն տեղի չի ունեցել՝ չէ որ շիաները մեղադրում էին Սալեհին ԱՄՆ-ի շահերին ծառայելու մեջ: Եմենը նետվեց քաղաքացիական պատերազմի հորձանուտի մեջ՝ միմյանց հակամարտող կառավարական գորքերի, «Ալ-Քաեդայի» վախիսաբիտների, հյուսիսային գավառների շիա-զեյդիտների, Հարավային Եմենի անջատողականների միջև, որոնք փորձում էին վերականգնել հարավեմենյան ինքավար պետականությունը: Իսկ վերջին ամիսների ընթացքում այստեղ իր ռազմական ներկայությունը ուրվագծեց եվս մեկ ահաբեկչական սյունի ֆունդամենտալիստների խմբավորում՝ «Իսլամական պետությունը» /ԻՊ/: Մինչև վերջին օրերս Եմենի տարածքի զգալի հատվածը չի վերահսկվում մայրաքաղաք Սա-

նայում տեղակայված կառավարության կողմից: Մասնավորապես, երկրի հյուսիսի որոշ տարածքներ գտնվում են շիա-զեյդիտների անմիջական վերահսկողության տակ, որոնք բարձրացնում են նաև սոցիալական կարգախոսներ՝ կառավարությունից պահանջելով աջակցություն ցուցաբերել բնակչության ընչազուրկ շերտերին, իջեցնել վառելիքի եվ պարենամթերքի գները: Իր հերթին, Սաուդյան Արաբիան ակտիվորեն սատարում է սյունիներին, ընդ որում ոչ միայն կրոնական համերաշխության պատճառով, այլ նաև՝ ելնելով Եմենում անկայունությունը արհեստականորեն պահպանելու ձգտումներից: Քանզի հանրապետական բնույթի կառավարմամբ ուժեղ արաբական պետությունը, որը բնակեցված է էթնոմշակութային առումով մերձավոր բնակչությամբ, կարող է լուրջ սպառնալիք հանդիսանալ սաուդյան միապետության համար: Հատկապես եթե հաշվի առնենք երկու պետությունների միջեվ առկա տարածքային վեճերը, որոնք հարթված չեն դեռ 1918 թ.-ին Եմենի անկախության հռչակման պահից: Բացի այդ, սաուդիտները միշտ մտահոգված են եղել իր գազա-նավթային Արևելյան գավառի շիաների հավանական ապստամբությամբ:

Արդյունքում, այսօր իշխանությունը դեֆակտո գտնվում է զեյդիտ-խուսիտների ձեռքում, իսկ խամաճիկ Հադիի փախուստը Սաուդյան Արաբիա որպես առիթ օգտագործվեց Էր-Ռիադի եվ ԱՄՆ-ի կողմից Եմենի վրա հարձակում իրականացնելու համար, որում, ըստ ամենայնի, իշխանության մի շարք լծակներ կրկին վերադարձվել են նախկին նախագահ Մալեհին, քանի որ նա սկսել է սատարել զեյդիտներին: Իհարկե՝ ԱՄՆ-ի եվ Սաուդյան Արաբիայի հետ մեկտեղ, Եմենի իրադարձություններում կարելի է տեսնել նաև Իրանի միջամտությունը, սակայն, ըստ մեզ, դա իրավիճակի պարզունակ մեկնաբանում է: Անշուշտ Իրանն անտարբեր չէ եվ երբեք էլ անտարբեր չի եղել այլ երկրների շիաների ճակատագրի նկատմամբ /այդ թվում՝ Եմենի/: Սակայն տվյալ դեպքում մեղադրել Իրանին այն բանում, որ նա օգնության ձեռք է մեկնում իր «հոգեվոր եղբայրներին» եվ մարդասիրական օգնություն է ուղարկում Սաուդյան Արաբիայի ու Արաբական թերակղզու այլ ռեժիմ-

ների կողմից ուժակոծվող Եմեն, եվ այս ամենը մեկնաբանել որպես «ռազմական միջամտություն»։ Կարծում ենք, որ դա կլինի ծայրահեղ անսկզբունքայնություն եվ ապացույցն այն բանի, որ Իրանին մեղադրողները ինքնուրույն չեն եվ ամբողջովին գործում են ԱՄՆ-ի եվ Իսրայելի թելադրանքով: Իդեալ, սա լիովին վերաբերվում է նաև Թուրքիայի իշխանություններին, որոնք հանդես են գալիս ապստամբած շիա-զեյդիտների դեմ եվ սատարում են սաուդիտների ագրեսիային Եմենի նկատմամբ: Քչերը գիտեն, որ Եմենում սաուդիտների կողքին /նշանակում է՝ ԱՄՆ-ի կողքին/ շիաների դեմ ակտիվորեն պատերազմում են նաև «Ալ-Քաեդայի» եվ «ԻՊ»-ն գրոհայինները: Եվ եթե ի նկատի ունենանք, որ «Ալ-Քաեդայի» բազմաթիվ խմբեր արդեն միացել են «ԻՊ» խմբավորմանը, եվ այն, որ այս տիրահոյակ «Խալիֆաթի» շարքերում մշտապես մարտնչել են բազմաթիվ արտասահմանյան վարձկաններ /այդ թվում՝ Արեվմուտքի երկրների/, ապա կարելի է եզրակացնել, որ Եմենի ժողովուրդը՝ Սիրիայի ու Իրաքի ժողովուրդների պես, դարձել է միջազգային ահաբեկիչ-սյունիների անթաքույց հարցակման գոհը, որոնք գործում են Սաուդյան Արաբիայի, ԱՄՆ-ի եվ Թուրքիայի հովանավորչությամբ, իսկ նրանց ստվերում վարպետորեն թաքնված է Իսրայելը:

Բազմաթիվ երկրներ, այդ թվում Իրանը, Ռուսաստանը եվ Չինաստանը, մեղադրանքներ հնչեցրին ԱՄՆ-ի հասցեին՝ նշելով, որ հատկապես Եմենի օրինակով ցայտուն դրսևվորվում է Վաշինգտոնի արտաքին քաղաքականության երկակի ստանդարտների հանցավոր սկզբունքի կիրառումը: Սատարելով ու նույնիսկ անմիջականորեն օգնելով գահընկեց անել Մալեհին եվ նրան փոխարինելով Հադիյով, ԱՄՆ-ն ինքն է բացել «Պանդորայի արկղը», քանզի երբ ինչ-որ մեկը իշխանության է գալիս պետական կամ զինված հեղաշրջման ճանապարհով, ապա նա պետք է մշտապես պատրաստ լինի, որ իրեն եվս կհեռացնեն նույն ճանապարհով: Եվ եթե հետխորհրդային Ուկրաինայի պարագայում ԱՄՆ-ը բացահայտ սատարում ու փորձում են ամրապնդել հեղաշրջում իրականացնողների դիրքերը, ապա Եմենում նրանք /սաուդիտների ու թուր-

քերի հետ միասին/ սատարում են հեռացված խամաճիկին՝ Հադիին: Բնական է, որ նման մոտեցումը էլ ավելի է խորացնում Եմենի ու նրա ժողովրդի ողբերգությունը, քաղաքացիական խաղաղության վերականգնման հիմնախնդիրը մղում է դեպի փակուղի: Չէ որ ամենքին պարզ է, որ եթե Հադին չունենար ԱՄՆ-ի, Մաուդյան Արաբիայի եվ Թուրքիայի աջակցությունը, ապա խուսիտների հաղթանակը Եմենում կլիներ վերջնական՝ թեկուզեվ նախկին նախագահ Սալեհի դիրքերի ամրապնդման գնով: Սակայն, նշված երկրների նպատակների էությունը հենց այն է, որ եղբայրասպան զինված հակամարտություն հրահրեն շիաների եվ սյուննիների միջեվ, ուստի եվ նրանք հանդես են գալիս հեղինակազրկված խամաճիկ Հադիի աջակցությամբ: Ընդ որում, Արեվմուտքն ու սյուննիները չեն մոռանում նաեվ սեփական շահերի մասին. երբ պարզ դարձավ, որ Խուսիտների զորքերը հաղթանակով Ադենից շարժվում են դեպի Բաբ-էլ-Մանդեբի նեղուց, որը ճանապարհ է հարթում Կարմիր ծովի եվ Սուէզի ջրանցքի հսկողության համար, ապա նշված «դերակատարները» հնարավորություն տվեցին «Ալ-Քաեդայի» եվ «ԻՊ» գրոհայիններին զավթել այդ տարածքները: Եվ կարիք չկա նույնիսկ նշել, թե տեղի բնակչության նկատմամբ ինչպիսի վայրագություններ են իրականացնում նրանք, ում ստեղծել ու աճեցրել են հենց ԱՄՆ-ի, Իսրայելի, Մաուդյան Արաբիայի ու Թուրքիայի հատուկ ծառայությունները:

Հասկանալի է, որ Եմենի ներկայիս հակամարտության խորքային արմատներում ոչ միայն արտաքին ուժերի մշտական միջամտություններն են, այլ նաեվ լրջագույն սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներն ու դժվարությունները: Այո, Եմենը իր հարեվանների պես հարուստ չէ գազով եվ նավթով: Բացի ծանրագույն սոցիալական իրավիճակը, Եմենի լրջագույն հիմնախնդիրներից է հանդիսանում թմրամոլությունը /փորձագետների գնահատմամբ երկրի բնակչության 60 տոկոսն օգտագործում է կատի տերեվներ՝ տեղական թմրանյութ/, որը ոչ միայն բացասական ազդեցություն ունի բնակչության առողջության, այլ

նաեվ գյուղատնտեսության զարգացման վրա, քանի որ կատի պլանտացիաները զբաղեցնում են պիտանի գյուղատնտեսական տարածքների զգալի մասը: Բացի այդ, բարձր ծնելիության հիմնապատկերի վրա առկա երկրի բնակչության սոցիալական դեպրիվացիան անխուսափելիորեն հանգեցնում է երիտասարդության գործազրկությանը ու աղքատացմանը: Արդյունքում ձեկավորվում ու տարածվում են արմատական տրամադրությունները երիտասարդ եվ հասուն եմենցիների մոտ: Անկայուն քաղաքական համակարգով այս պետության համար լուրջ սպառնալիք է հանդիսանում նաեվ հասարակության ցեղային տարանջատվածությունը: Ցեղերի շեյխերը փաստացի հանդիսանում են Եմենի իրական տերերը, որոնք ամբողջովին վերահսկում են իրենց ենթակա ցեղակիցներին: Ցեղերի միջեվ մշտապես ծագում են բախումներ՝ խմելու ջրի սակավաթիվ աղբյուրների նկատմամբ հսկողություն սահմանելու դրդապատճառով:

Նշված բոլոր հիմնախնդիրների հանրագումարին հավելվում են բնակչության ժողովրդագրական աճի բարձր տեմպերը: Ամեն տարի երկրի բնակչությունն աճում է 3,4 տոկոսով: Համապատասխանաբար, առաջիկա 20 տարիների ընթացքում Եմենի բնակչությունը կարող է գերազանցել 40 միլիոնը, որը կարող է անկանխատեսելի հետեվանքների հանգեցնել, քանի որ Եմենը չի կարող աշխատատեղերով ապահովել նման թվաքանակի մարդկանց /նկատենք, որ արդեն այժմ աշխատանք չունի Եմենի բնակչության զգալի հատվածը, որի 60 տոկոսը կազմում են մինչեվ 25 տարեկան երիտասարդները, հավելենք նաեվ արդեն 10 տարի ձգվող պատերազմը/:

Այսպիսով, 53 տարի առաջ Եմենում տեղի ունեցած եվ ի սկզբանե կասեցված քաղաքական հեղափոխությունը /1962 թ.-ի սեպտեմբերյան հեղափոխությունը, որը հանգեցրեց միապետության տապալմանը/ այդպես էլ չկարողացավ լուծել երկրի հասարակության հիմնախնդիրները: Վերջիններիս խորացումը կարող է հանգեցնել աղետաբեր հետեվանքների ամբողջ Հարավ-Արեվմուտյան Ասիայի համար: Ներկայումս ներկայացված իրավի-

ճակը օրեօր սրվում է հատկապես արտաքին միջամտության հետեվանքով:

Դժվար է պատկերացնել, որ զեյդիտական /խուսիտական/ «Անսար Ալլահ» կազմակերպությունը /փաստացի սա ապստամբած հյուսիսային շիա ցեղերի ռազմաքաղաքական միավորում է՝ ալ-Խուսի տոհմի ղեկավարությամբ/ կարող է հանկարծ հանձնվել թշնամուն, որին Եմենի կառավարական զորքերին սկսած 2004 թ.-ից այդպես էլ չհաջողվեց կոտրել ու չօգնեց նաեվ Սաուդյան Արաբիայի ռազմական միջամտությունը /դա միայն լուրջ կորուստներ պատճառեց սաուդիտներին/: Եմենն այսօր հազեցած է տարաբնույթ ռազմական տեխնիկայով, եվ խուսիտներն արդեն սկսել են կործանել իբր-թե ապստամբներին ռմբակոծող սաուդյան եվ այլ F-ները, սակայն որոնք իրականում ոչնչացնում են քաղաքացիական շինություններն ու հիմնականում խաղաղ բնակչությանը, այդ թվում՝ արտասահմանցիներին: Այնքան մեծ էր ԱՄՆ-ի իշխանությունների շահագրգռվածությունը շիաների ռազմական ճնշման գործում, որ նույնիսկ հրաժարվեցին դուրս բերել սեփական քաղաքացիներին, իսկ վերջիններին փրկում էին ռուսական օդաչուներն ու նավաստիները: Իսկ այն բանից հետո, երբ ամերիկամետ ճամբարը Եմենում դիմեց ցամաքային գործողությունների, ապա խուսիտները հակահարձակման միջոցով մայիսի 22-ին Սաուդյան Արաբիայի տարածքում ռազմաբազա գրավեցին: Սաուդյան Ալ-Կատիֆ քաղաքի շիա մսկիթում տեղի ունեցած անմարդկային ահաբեկչական գործողությունը, որը տասնյակ շիաների կյանք խլեց, եվ որի պատասխանատվությունն իր վրա վերցրեց «ԻՊ» խմբավորումը, էլ ավելի սրեց իրավիճակը եվ ԱՄՆ-ի, Թուրքիայի, Սաուդյան Արաբիայի եվ Իսրայելի պատասխանատվությունը, քանի որ ոչ միայն իրանյան, այլև՛ եվրոպական մամուլը բացահայտ գրում է այն մասին, որ «Խալիֆաթի» բազմամյա ղեկավար Աբու Բակր ալ-Բադդադին իրականում կրում է Շիմոն /Մայմոն/ Էլիոթ անունը եվ հանդիսանում է Մոսադի գործակալը, իսկ ամերիկյան գործակալներ են հանդիսանում «ԻՊ» խմբավորման մյուս բարձրաստիճան ղեկավարները:

Էր-Ռիադի կողմից նշանակված եվ նույն տեղը փախուստի դիմած նախագահ Աբդ Ռաբբու Մանսուր Հադիին փաստացի չունի եվ երբեք չի էլ ունեցել սեփական հասարակական աջակցություն: Լինելով երկրի հարավից եվ նախկինում հանդիսանալով Եմենի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետության /Հարավային Եմեն/ սպա՝ նա օտար է Հյուսիսային Եմենի ցեղերի համար, իսկ Հարավում նրան շատերը չեն կարողանում ներել այն, որ նա 1994 թ.-ին չսատարեց ՅժԴՀ անջատումը եվ հանդես եկավ Մալեհի դիրքերից: Արդյունքում նա լիարժեք կախվածության մեջ ընկավ Սաուդյան Արաբիայից եվ Խահիդ զորավոր ցեղամիավորումից, որոնք երկրին տիրում էին Մալեհի ժամանակ եվ չեն ցանկանում կիսել իշխանությունը: Բնական է, որ դա ոչ մի կերպ ձեռնատու չէր «Անսար Ալլահի» շիա ապստամբներին եվ երկրի Հարավին լայն լիազորություններ տալու կողմնակիցներին, ուստի եվ բոլոր բանակցությունները մտնում էին փակուղի: Այժմ Խաշիդ ցեղամիավորումը /ըստ էության՝ նախկին նախագահ Մալեհը/ եվ ալ-Խուսի տոհմը դաշնակիցներ են, եվ սա դեռ վերջը չէ, քանի որ Եմենի պատմության ամբողջ ընթացքում, երբ երկրի վրա հարձակվում էին օսմանցիները կամ ավելի ուշ սաուդիտները, ապա տեղի էր ունենում երբեմնի բացահայտ հակառակորդների միավորում: Իսկ այնպիսի պայմաններում, երբ երկիրը մասնատում են սաուդյան զինվորականները, Հադիին հավատարիմ զորամասերը եվ «Ալ-Քաեդայի» գրոհայինները, հայրենասիրական տրամադրություններով տոգորված եմենցիների միավորումը կարող է հանգեցնել նրան, որ եվ՝ սաուդիտները, եվ՝ «Ալ-Քաեդայի» ահաբեկիչ-վախիսաբիտները, եվ՝ «ԻՊ» գրոհայինները կարող են դուրս շարվել երկրից, իսկ պատերազմը հաստատակամորեն կարող է տեղափոխվել հենց Սաուդյան Արաբիայի տարածք: Ինչեվէ, ասում են, թե ԱՄՆ-ը եվ Իսրայելը նախագծել են այս երկրի դեզինտեգրացիան /ոչնչացումը/: Այս մասին մտորելը հենց սաուդիտների պարտականությունն է: Սակայն, այս թեմայի քննարկումներն ու վարկածների առաջադրումը, ցավոք, չեն նվազեցնում Եմենի ողբերգության ծավալներն ու հումանիտար աղետի չափսերը:

Խուսիտական շարժման՝ զեյդիզմի պատմական արմատները

*Մամվել Մարգարյան
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Երեվանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ*

Խուսիտները /կամ «Անսար Ալլահի» ռազմականացված շարժումը/ կամ ջարտողիտները նորագույն պատմության ընթացքում կրկին իրենց մասին խոսեցրին 2004 թ.-ին:

Եմենում զեյդիզմի հիմնադիր /վերածնող/ Հուսեյն ալ-Խուսին 2004 թ. սեպտեմբերին սպանվեց Եմենի կառավարական զորքի կողմից: Այդ պահից շարժումը գլխավորեց նրա եղբայրը՝ Աբդել Մալեկ ալ-Խուսին:

Զեյդիտյան կարգախոսներով առաջնորդվող նոր ապստամբությունը /2009 թ./ ճնշվեց եմենյան բանակի կողմից՝ սաուդյան բանակի ակտիվ աջակցությամբ: 2010 թ.-ին կառավարությունն ու խուսիտները համաձայնության եկան բոլոր հիմնախնդիրները խաղաղ բանակցությունների միջոցով լուծելու շուրջ:

2014 թ.-ի սեպտեմբերի 19-ին սկիզբ առավ խուսիտների նոր ապստամբությունը, որոնք արագ կերպով զավթեցին երկրի տարբեր շրջաններն ու մայրաքաղաք Սանան /2015 թ. փետրվար/:

Սաուդյան Արաբիան թե՛ նախկինում, թե՛ այժմ մեղադրում է Իրանին խուսիտների շարժմանը հագեցվոր ու նյութական /դրամ եվ զենք/ աջակցություն ցուցաբերելու մեջ: Սակայն, եթե նախկինում Իրանը հրաժարվում էր ամեն տեսակ մեկնաբանություններից եվ իր որեվէ մասնակցությունից խուսիտական շարժմանը, ապա 2015 թ. գարնանը Իրանի տարբեր քաղաքական գործիչները մի քանի անգամ խոսեցին խուսիտների հետ հոգեվոր միասնության մասին, սակայն՝ ոչ ավելին:

2015 թ.-ին հունվար-մայիս ժամանակահատվածում «Մահ Ամերիկային, մահ Իսրայելին» կարգախոսով խուսիտական ցույցերն ընթանում են ամբողջ Եմենի տարածքում:

2015 թ.-ի մայիսի 14-ից Եմենում գործում է զինադադարը: 2015 թ.-ի մարտին մարտեր էին ընթանում «Ալ-Քաեդայի» ջոկատների եվ խուսիտների միջեւ, որոնք ընթացքում զոհվեց ավելի քան 27 խուսիտ եվ վիրավորվեց 150-ը:

2015 թ.-ի մայիսին, խուսիտներին մարդասիրական օգնության նպատակով, Իրանը դեպի Եմենի ափերն ուղարկեց «Իրանե շահիդ» տրանսպորտային նավը՝ ռազմական կորվետի ուղեկցությամբ: Իրանը սպառնաց համալրել ռազմանավերի քանակը, եթե խոչընդոտեն «Իրան շահիդի» բեռնաթափումը:

Մայիսի վերջին, եմենյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման հարցի քննարկման նպատակով Մոսկվայում հանդիպեցին Իրանի եվ Ռուսաստանի արտգործնախարարները:

Եմենի 25 մլն բնակչությունից 8 մլն-ը իրենց համարում են զեյդիտներ, որը հիմնականում երկրի հյուսիսային շրջանների բնակչությունն է: Գտնում են, որ զեյդիտական տոհմերը իշխել են Հյուսիսային Եմենում 901 թ.-ից մինչեւ 1962 թ.-ը:

Ուրեմն, ովքե՞ր են զեյդիտները: Շիիզմի այս ճյուղի հիմնադիրը համարվում է Ջայդն իբն Ալին՝ շիա չորրորդ իմամ Ջեյդ-ալ-Աբիդինի որդին /մահացել է 744 թ.-ին/: Ջեյդիզմի գաղափարների դրոշի ներքո /այն մասին, որ ցանկացած մահմեդական երկրի ցակացած ժողովուրդ իրավունք ունի ապստամբելու եվ անարդար տիրակալին գահընկեց անելու համար/ 739 թ.-ին Ջայդ-իբն Ալին ապստամբություն բարձրացրեց խալիֆի դեմ, սակայն խալիֆի զորքերը 740 թ.-ի սեպտեմբերին ճնշեցին այդ ապստամբությունը եվ սպանեցին Ջայդին: Նրա մարմինը խաչվեց Կուֆա քաղաքում, իսկ գլուխն ուղարկվեց Դամասկոս՝ խալիֆ Խիշամին: Սակայն զեյդիզմը չմահացավ, իսկ կոտրված շարժման կողմնակիցները սփռվեցին ամբողջ Իրանի /Խորասան, Միստան, Խուզիստան, Ֆարս/, Հյուսիսային Աֆրիկայից /791 թ.-ին Բդրիսիտների տոհմը զեյդիզմը պաշտոնապես հայտարարեց որպես պետական կրոն եվ հաջողությամբ քարոզում էր իր գաղափարները 8-10-րդ դարերի ընթացքում/:

680 թ.-ին սպանվեց շիիզմի գլխավոր սրբերից մեկը՝ Հուսեյնը, որի մասունքները՝ համաձայն լեգենդի, թաղվել են Կերբելա քաղաքում: Մա շիաների Իրաքի տարածքում գտնվող սուրբ քաղաքներից մեկն է: Շիա – խարիջիտները դեռ 661 թ.-ին լքել են Ալի խալիֆին, որի հետնորդներն էլ հենց հանդիսացել են առաջին շիաները: Հանուն շիիզմի հաղթանակի տրված մահը խարիջիտները համարում էին ազնիվ գործ ու հերոսական վարք: Նրանք մերժում էին «թաքնված իմամի» /մահդի/ գաղափարը եվ համարում էին, որ իմամ կարող է դառնալ ցանկացած մահմեդական՝ սեփական անձնական հատկանիշների բերումով: Խաջիտները պնդում էին, որ կարող է լինել մի քանի իմամ եվ համապատասխանաբար՝ մի քանի իմամատ-պետություն: Նրանք մերժում էին նաև միասնական խալիֆաթի եվ ցանկացած խալիֆի աստծո ընտրյալ լինելու գաղափարները: Ինչպես հայտնի է, 18-19-րդ դարերի բազմաթիվ գիտնականներ գտնում էին, որ շիիզմը ծագել է Իրանում՝ որպես ազգային շապիկով իսլամ կամ որպես իրանական պատասխան արաբական սունիզմին: Մակայն, դա այնքան էլ չի համապատասխանում առկա փաստերին, քանի որ հայտնի է, որ դեռ 7-րդ դարում առաջին շիաները Եմենի եվ հարավային Մետոպոտամիայի արաբներն էին, իսկ Իրանում շիիզմը լայնորեն տարածվել է միայն 10-րդ դարում, իսկ որպես պետական կրոն հռչակվել է 16-րդ դարում, երբ 1501 թ.-ին Սեֆեվիդները վերածնեցին իրանական ազգային պետականությունը: Շիիզմը որպես «իրանական ռասայական կրոն» ներկայացնելու փորձերը տկար են թեկուզ այն պատճառով, որ չկա ու չի կարող լինել ռասայական կրոն հասկացությունը: Ցանկացած պատմական ժամանակահատվածում եվ ցանկացած երկրում կրոնն արտացոլում է տնտեսական, մշակութային, սոցիալական, սակայն ոչ էթնիկ ընդհանրականությունը:

Այսօր խուսիտները հայտարարում են, որ իրենք հանդես են գալիս «իրական զեյդիզմի» դիրքերից՝ հանուն համաշխարհային շիիզմի պաշտպանության, ուստի եվ իրենց թշնամիներն են «ԻՊ»-ը, «Ալ-Քաեդան» եվ մասխաբական այլ տարբեր զինված խմբավորումները: Խուսիտները գտնում են, որ «մաքուր իսլամի»

/կամ այլ կերպ՝ «նախնական իսլամի»/ իրական գաղափարներն արտացոլում են միայն իրենց հայացքները: Նրանց համար հարազատ է այաթոլլա Խոմեյնու քաղաքական շիական դոկտրինն այն մասին, որ մահմեդական պետության մեջ չպետք է լինեն ընտրյալներ, ում աստված ընտրել է որպես տիրակալներ եվ դեկավարներ: Նրանք պնդում են, որ զեյդիտական գլխավոր գաղափարը քաղաքականության մեջ ճշմարիտ է նաև պայտ: Այդ գաղափարը կայանում է նրանում, որ՝ անկախ ծագումից, սոցիալական արմատներից ու տոհմից, ցանկացած առավել բարոյական ու ազնիվ մահմեդականը կարող է գլխավորել ցանկացած մահմեդական պետություն, եթե դա է կամենում ժողովուրդը, եվ եթե նա անշահախնդիր է ու ազնիվ, եթե նա ցանկանում է իր ժողովրդի ու ընդհանրապես՝ բոլոր ընչազուրկ մարդկանց բարեկեցությունն ու բարգավաճումը:

Պատմության հետընթաց հայացքը վկայում է, որ զեյդիզմը կարողացել է ստեղծել մի քանի մահմեդական պետություններ 10-18-րդ դարերի ընթացքում: Մակայն, Մելիմ Յավուզ /Ահեդ/ սուլթանի օրոք՝ թուրքական բանակի կողմից Սիրիայի, Հորդանանի, Եգիպտոս Հիջազի եվ Եմենի զավթումից հետո /1517 թ./, շատերը կարծում էին, որ զեյդիզմի մնացորդները Եմենի հետամնաց քոչվոր ցեղերի մոտ արդեն արմատախիլ են արվել, քանի որ ոչ միայն այդ օսմանյան սուլթանը, այլ նաև նրա բազմաթիվ հետնորդները արտահայտված սուննիներ էին, իսկ նման պայմաններում իսլամի ցանկացած այլ ուղղվածության կենսունակության պահպանման հնարավորությունները նվազագույն էին:

Մակայն, Հյուսիսային Եմենի ցեղերը ոչ միայն պահպանեցին իրենց հավատարմությունը զեյդիզմին, այլ նաև վերջին մի քանի տասնամյակների ընթացքում կարողացան այն դարձնել սոցիալական ու քաղաքական պայքարի դրոշմ: Հետամնաց քոչվոր ցեղերի համար զեյդիզմի հրապուրիչ լինելը կայանում է երկրագնդի վրա մի քանի իմամատների միաժամանակյա գոյության հնարավորության քաղաքական դրոշմի մեջ, ինչպես նաև հանուն զեյդիզմի հաղթանակի միասնական իսլամական Խալիֆաթի անհրաժեշտության

ու կարեվորության /ինչը հանդիսանում է «ԻՊ» շարժման հիմնական դոկտրինը/ մերժման մեջ: Արեվմտյան բազմաթիվ լրագրողներ փորձում են գուգահեռներ անցկացնել «Հեգբոլլահ» եվ խուսիտական «Անսար Ալլահ» շարժումների միջեվ՝ նրանց կարգախոսներում, կառուցվածքում, գործունեության մեթոդներում դիտարկելով ընդհանուր գծեր: Ընդ որում, հաճախ եզրահանգում է կատարվում առ այն, որ այդ շարժումների հիմքում պետք է նկատել «Թեհրանի ձեռքը»: Հավանաբար, Թեհրանում կան ուժեր, որոնք կցանկանային ղեկավարել ու ուղղորդել ցանկացած ընդդիմադիր ու շիական շարժումները իսլամական աշխարհում: Սակայն, պետք չէ գերագնահատել իրանական շիա-արմատականների միջազգային հնարավորությունները: Ոչ ֆինանսական, ոչ էլ ռազմական առումով Իրանը այնպիսի հնարավորությունների չի տիրապետում, որոնք կարող են էական ազդեցություն

ունենալ Հարավային Արաբիայում տիրող իրավիճակի վրա: Այլ բան է հոգեվոր-կրոնական ազդեցությունը, որի հնարավորություններն ավելի լայն են, քան ազդեցության այլ ուղղություններինը: Այլ բան է նաեվ այն, թե որքանով շիական հոգեվոր ազդեցությունը կարող է հանգեցնել քաղաքական միասնության: Օրինակ, շիական դոկտրինի ազդեցությունը չափազանց մեծ է «Հեգբոլլահում», սակայն դարձավ արդյո՞ք այդ կազմակերպությունը միավորող ուժ իսլամական աշխարհում: Չնայած հակաիրաքայելական կարգախոսների ու կոչերի նմանությանը, ոչ խուսիսները, ոչ էլ այլ շարժումները չստեղծեցին արդյունավետ քաղաքական կառույցներ: Նրանք հեղինակություն են վայելում միայն առանձին երկրի կամ նույնիսկ գավառի տեղական մակարդակի վրա, սակայն նրանք դեռ հեռու են տարածաշրջանային կամ համազգային մակարդակներից:

Նոր միտումներ Մերձավոր Արևելքի արդի զարգացումներում

Արաքս Փաշայան

Արաբագետ, Արևելագիտության ինստիտուտ, արաբական երկրների բաժնի ավագ գիտաշխատող, պ.գ.թ., դոցենտ

Այսպես կոչված արաբական գարնան դեպքերի արդյունքում Մերձավոր Արևելքում ի հայտ են եկել նոր միտումներ.

- Մերձավոր Արևելքի երկրների ազգային անվտանգության համակարգը գրեթե փլուզված է. առանձին պետություններ կորցրել են ինքնիշխանությունը կամ գտնվում են կորցնելու շեմին:
- Աննախադեպ մեծացել է կրոնական գործոնի նշանակությունը Մերձավոր Արևելքի քաղաքական գործընթացներում: Նոր թափ են ձեռք բերել սուննի իսլամի պահպանողական և ծայրահեղական ուղղությունները, այդ թվում՝ սալաֆիականությունը: Մարտնչող իսլամիզմը դարձել է Մերձավոր Արևելքի արդի գործընթացների ցցուն դրսևորումներից մեկը:

- Մերձավոր Արևելքում լայն տարածում են ստացել ոչ միայն կրոնական մոլեռանդությունը, այլև միջէթնիկ, միջդավանական և միջցեղային հակասությունները, որոնք նախկինում գտնվում էին լատենտ վիճակում:
- Աննախադեպ մեծացել է Մերձավոր Արևելքի նկատմամբ արտաքին գործոնի միջամտությունը: Մերձավոր Արևելքը հերթական անգամ դարձել է գերտերությունների շահերի բախման ու մրցակցության վայր:
- Մերձավոր Արևելքի նկատմամբ մասնավորապես ԱՄՆ-ի քաղաքականությունը կարելի է համարել նեոգաղութատիրական դիսկուրս:
- Այսպես կոչված արաբական գարնան դեպքերից հետո Մերձավոր Արևելքում մեծ թափ են ստացել ներիսլամական հակասություններն ու մրցակցությունը, մեծացել են

սուննիական և շիայական աշխարհաքաղաքական ուժերի բախումը ի դեմս Իրանի և նրա դաշնակիցների և Պարսից ծոցի արաբական միապետությունների ու նրանց դաշնակիցների միջև: Արտաքին դերակատարները փայլուն կերպով կարողանում են օգտագործել այն հակասությունները, որ գոյություն ունեն իսլամական աշխարհում:

- Այսպես կոչված արաբական գարնանը հաջորդած դեպքերը, որոնց սկիզբը կարելի է համարել երկու հազար երեքի ԱՄՆ-ի՝ Իրաք ներխուժումը սկիզբ դրեցին Մերձավոր Արևելքի երկրներից քրիստոնյաների անսխաղեպ արտագաղթին: Կարելի է ասել, որ հարցականի տակ է դրված Մերձավոր Արևելքում քրիստոնեության հեռանկարը: Չի բացառվում, որ քրիստոնեությանը հաշված տարիներ են մնացել:

- Մերձավոր Արևելքում քրիստոնյաների դիրքերի թուլացումը անքակտելիորեն կապված է նաև հայերի հետ: Մանսավորապես վիճարկելի է Սիրիայի, Իրաքի, Լիբանանի հայերի հեռանկարը: Հատկապես Սիրիայի հայերի գոյությունը այդ երկրում հաշված տարիների հարց է: Հավելի հայ համայնքը կրել է այնպիսի ծանր հարվածներ, որ այլևս ի վիճակի

չի լինի վերականգնվելու: Չունենալով անձի, գույքի ապահովության, տնտեսական ազատ գործունեություն վարելու և որակյալ կրթության երաշխիքներ հայերը չեն ցանկանա ապրել Սիրիայում:

- Այսպես կոչված Իսլամական պետության գոյությունը Մերձավոր Արևելքում այլևս փաստ է և միջազգային հանրությունը ստիպված է հաշվի նստելու դրա գոյության հետ: ԱՄՆ-ը, որն անմիջական պատասխանատվություն ունի նույն Իրաքի նկատմամբ չունի այդ ուժի դեմ պայքարելու հստակ ռազմավարություն, իսկ Սիրիայի և Իրաքի պաշտպանական ուժերը դեռևս ի վիճակի չեն արդյունավետ կերպով պայքարել Դաիշի դեմ: Իսլամական պետության գոյությունը փաստում է, որ այն վերաճել է կարևոր գործոնի և ծառայում է առանձին պետությունների ազգային շահերին:

- Մերձավոր Արևելքում հավասարաշունչություն կարող է ստեղծվել միայն Իրանի ակտիվ մասնակցությամբ: ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների ձախողումը Բաշար Ալ-Ասադին իշխանությունից հեռացնելու հարցում վկայում է, որ Իրանի հետ ակտիվ համագործակցությունը անխուսափելի է:

Քրիստոնյաների արտահոսքը տարածաշրջանից ել Հայաստանը

*Վիկտորիա Առաքելովա
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Երևանի պետական համալսարանի իրանագիտության ամբիոն,
Iran and the Caucasus (Brill, Leiden)միջազգային հանդեսի խմբագրի տեղակալ*

Մերձավորարևելյան տարածաշրջանը հարյուրամյակների ընթացքում հանդիսանում է կարեվոր շփումային գոտի, ինչը վառ կերպով արտացոլված է նրա կրոնական խճապատկերում:

Օրթոդոքսիայի կենտրոններից հավասարաչափ հեռավորության վրա գտնվող տարածաշրջանի արեալներում մշտապես առաջացել են տարբեր աղանդներ: Այդպիսով՝ բացի դոգմատիկ դաշտը, հարյուրամյակների ընթացքում իսլամի ներսում այստեղ ձևավորվել է նաև բավական ծանրակշիռ ոչ դոգմատիկ տարածք:

Չնայած իսլամում դոգմայի ել հերետիկոսության միջեվ սահմանագծի անհստակությանը, որին օտար է ընդհանրականությունը, այսպես թե այնպես մի շարք հոսանքներ դիտարկվել են որպես ոչ դոգմատիկ: Առաջին հերթին, նման հոսանքների շարքին է դասվում ծայրահեղ շիական տարածքը: Բացի այդ, հերետիկոսական դաշտին է դասվում նաև իսլամի սինկրետիկ ածանցյալ՝ եզիդիզմը:

Վահաբիզմի արմատական դոկտրինի տեսանկյունից, հերետիկոսական դաշտին է դասվում այն ամենը, ինչը չի ընդունում վահաբիստական գաղափարախոսությունը՝ քրիստոնյաներից մինչև եթն-կոնֆեսիոնալ

համայնքներ, չափավոր շիաներից մինչև ծայրահեղ շիական աղանդները:

Տվյալ խմբերի ներկայացուցիչների հետապնդումները բնավ նոր երեվույթ չէ. մի շարք պատմական սկզբնաղբյուրներում, միսիոներների, զիվորական բժիշկների հաշվետվություններում կարելի է հանդիպել նման հետապնդումների փաստերի բազմաթիվ արձանագրություններ, իսկ ավելի ուշ շրջանում՝ նաև պաշտոնական փաստաթղթերում: Այսպես, հարյուր տարի առաջ Ազգերի Լիգայի կողմից ստեղծված հատուկ հանձնաժողովը կոչված էր քննության առնելու քրիստոնյաների վիճակը Մոսուլում: Հանձնաժողովի «Ընդհանուր եզրակացության» մեջ՝ «Հատուկ առաջարկություններում» բաժնում, որոնք «հույժ կարեվոր էին երկրում խաղաղության հաստատման ու մարդկանց բարեկեցության համար», նշվում է, որ «Քանի որ վիճելի տարածքները... բոլոր դեպքերում գտնվելու են մահմեդական պետության իրավասության ներքո, փոքրամասնությունների /քրիստոնյաների, ինչպես նաև հրեաների ու եզդիների/ ձգտումների բավարարման ու նրանց պաշտպանության համար միջոցներ ձեռնարկել ...»:

Թերեվս, ներկայիս իրավիճակը տարբերվում է մտադրության մասշտաբայնությամբ: Լիովին ակնառու է քրիստոնյաների արտահոսքը տարածաշրջանից: Ընդհանուր առմամբ անհետանում է կրոնական բազմաձևությունը՝ իր տեղը զիջելով միասեռ արմատական տարածքին:

Ինչ վերաբերում է կիրառական խնդիրներին, ապա Հայաստանն ունի դրական պատմական փորձ, երբ այն հայրենիք է դարձել ոչ միայն Մերձավորարեվելյան տարածքից ժամանած հայ փախստականների համար, այլ նաև ասորիների ու եզդիների համար: Եվ եթե հարյուր տարի առաջ այս գործընթացը տարերայնորեն էր տեղի ունենում, ապա ներկայումս Հայաստանը կարող է կրկնել այդ փորձն արդեն պետական ծրագրի մակարդակով՝ թեկուզ ոչ այնքան ծավալուն բնույթի, բայց միարժեքորեն ցուցադրելով հայկական պետության բարի կամքը եղբայր ժողովուրդների հիմնախնդիրների լուծման ընթացքում, ովքեր հետևողականորեն կիսել են հայ ժողովրդի ճակատագիրը՝ վերջինիս պատմության առավել ողբերգական շրջաններում: